ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2017թ. հուլիսի 10 N 141 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 8-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ – 728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 1510-Ն որոշմամբ հաստատված հավելվածի պահանջները, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների 2017 թվականի առաջին կիսամյակի կատարողականի դրական արդյունքները՝ ***կարգադրում եմ .***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայողներին քաղաքացիական ծառայողների պարգևատրման ֆոնդից պարգևատրել համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետին՝ ենթակա է վճարման ընդամենը 2346044 /երկու միլիոն երեք հարյուր քառասունվեց հազար քառասունչորս/ դրամ:

Գ. ԳՅՈՌԱԼՅԱՆ